

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1970—1971 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 7-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11.30-ին, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը:

Հանդիսությանը նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բազմաթիվ ծնողներ:

Հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով: Ապա հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին» թարգմանչաց շարականը: Այնուհետև հոգևոր ճեմարանի դասախոս տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը ընթերցում է Մատթեոսի Ավետարանից «Սերմնացանի առակ»-ը: Երգչախումբը կատարում է «Աշակերտք Քրիստոսի» շարականը:

Ապա հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը հանդես է գալիս բացման ոգևորիչ ճառով և վեր է հանում հոգևոր ճեմարանի դերը ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում հայ եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի հոգևոր, քրիստոնեական և հայրենասիրական դաստիարակության շնորհակալ գործում:

Տեսուչ հայր սուրբը կոչ է անում ուսանողությանը՝ լինել համեստ, խելացի, աշխատել ավելի արդյունավետ կերպով, գիտություն ամբարել, պատրաստվել գալիք օրերի ծառայության սուրբ գործին, որին անհամբեր սպասում են մեր եկեղեցին, մեր ժողովուրդը: Տեսուչ վարդապետը ջերմ լավատեսությամբ վստահեցնում է Վեհափառ Հայրապետին, որ Աստծու օգնությամբ և Ն. Ս. Օծության անմիջական հոգատարության ներքո այս տարի ևս ճեմարանի կամարների տակ, ձեռք-ձեռքի տված դասախոսների հետ, միասնական ու սիրով կաշխատեն՝ իր կոչման բարձրության վրա պահելու ուսումնա-դաստիարակչական գործը հոգևոր ճեմարանում:

Իր խոսքի վերջում տեսուչ հայր սուրբը հայցում է Վեհափառ Հայրապետի օրհնությունը սույն ծանր, պատասխանատու, սակայն պատվաբեր գործը հաջողությամբ պսակելու համար:

Ա լսարանի ուսանող Վրեժ Նաջարյանը ընթերցում է մի հատված Նարեկից՝ ս. Հոգու շնորհաբաշխությանը նվիրված:

Ապա խանդավառ մթնոլորտում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը և Իր հայրական խրատներով և հորդորներով մի անգամ ևս քաջալերում ուսանողությանը:

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը

բարեհաճում է Վեհարանում ընդունել դպրասախոսական կազմին, շնորհավորում ուսումնական նոր տարին օրհնում նրանց աշխատանքը, տալիս մի շարք կարևոր խորհուրդներ և թելադրություններ ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վերաբերյալ:

Սեպտեմբերի 8-ին, առավոտյան ժամը 9.30-ին, ուրախ ու տոնական է հնչում ճեմարանի հարկի տակ 1970—1971 ուսումնական տարվա առաջին զանգը:

Այս տարի հոգևոր ճեմարանում կատարվեց 15 նոր ուսանողների ընդունելություն:

Հոգևոր ճեմարանում ուսանողության ընդհանուր թիվն է 46՝ բաժանված հետևյալ դասարանական և լսարանական բաժինների վրա.

Ա դասարան՝ 14
Բ դասարան՝ 9
Գ դասարան՝ 10,
Ա լսարան՝ 7,
Գ լսարան՝ 6:

Այս ուսումնական նոր տարվա առիթով ապասվում են ուսանողներ և՛ Լիբանանից, և՛ Երուսաղեմից: